



ԵՍ ԵՐ ԴՈՒՄ ԵՄ . . .

*
* *

Սարի լանջին, փրփուր տալով,
Խոխոջում է գիժ առուն,
Կոճղի, քարի, հրհրբելով,
Հոսում ուբախ, գալարուն:

Վճիտ առուի կանաչ ափին
Կանգնած եմ ես զլիակոր,
Նայում արծաթ, զուլալ ջրին,
Երգեր հիւսում նորանոր:

Բայց իմ երգերն, թախծոտ սրտից
Մրմունջներ են ցաւազար,
Լուռ, անողոր, անգութ բախտից
Գանգատներ են անդազար:

Իմ երգերում ես չեմ երգում
Բերկրանք, տանջանք, անյոյս սէր,
Իմ երգերում ես չեմ գովում
Հայ աղջկայ սև աչեր:

Ես չեմ երգում սև աչերի,
Քնքոյշ, անոյշ ժպիտներ,
Ես չեմ գովում ծով աչերի
Սիրոյ շանթող սլաքներ:

Ես երգում եմ խեղճ մշակի
Արիւն, քրտինք, աշխատանք.
Ես զովում եմ նրա վաստակի
Կոշտ ու կոպիտ տառապանք:

Ես երգում եմ արհամարուած,
Հիւժուած, ճնշուած, գեղջկուհուն,
Որ կեանքի բեռն, ուսին առած,
Թե, Թիկունք է ամուսնուն:

Ես երգում եմ նաւթահանքում
Կարում՝ կորած բանւորին.
Արդար վաստակն եմ դրուատում,
Որը մօտ է իմ սրտին:

Ես երգում եմ հէգ ուսուցչին,
Իր փայփայած իգէալով.
Երգեր ձօնում չարքաշ կեանքին
Երախտագէտ, ջերմ սիրով:

Նհրէս ՌՕՏԱՆԻ.

